

СА 33-1  
СА 505

# ШРІРЧЧА ЗПЧЧЕ



ШРІРЧЧА

бч. ц. підгіллязині

ЧЕЗГІС 1933 ЗГЕЧЦЫ

ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР.

891.990

Ц - 47

891.995

ԱՊԱՎՆԻ

Q-47

## ԱՐԹԻԿԻ ՏՈՒՖԵԼ

Մեր քաղաքից շատ հեռու,  
 են ձյունապատ լեռներում  
 հնուց կա մի գյուղ փոքրիկ,  
 նրա անունն է Արթիկ:  
 Գյուղի յետեւը ձյունու  
 Արագածն է բարձրանում,  
 ներքեռում դաշտ, կանաչ-խոտ  
 և աղբյուրներ կարկաչյուն:  
 Մեր որերից շատ առաջ,  
 դաշնակների ժամանակ  
 այդտեղ տիրում եր քյոխվան,-  
 չարչին սրա ոգնական:  
 Զար եր քյոխվան, չար, անխիղճ  
 և նրա մտրակի տակ  
 դողում եյին ուռի պես  
 չքավորներն ու բատրակ:  
 Վողջ գյուղն առած բռան մեջ  
 Նա ճնշում եր անխնա,  
 թալանում դաշնակի հետ,  
 ու միշտ պաշտպանում իրար:  
 Յեթե մեկը սիրու աներ  
 նրանց դեմք խոսելու,  
 խկույն նա բանտ կնսաեր,  
 կամ կմեռներ աքսորում:

2

Դաշնակների ժամանակ,  
 արնախում քյոխվի համար  
 աշխատում եր մի տղա,  
 վորպես փոքրիկ գառնարած:  
 Հրաչիկ եր անունը,  
 խելացի և աչքաբաց,  
 բայց վողջ որն անցնում եր  
 չարչարանոքվ, կիսաքաղց:

 ՅԱՅԼԻ  
 ИНСТИТУТ  
 ВОСТОКОВЕДЕНИЯ  
 Академии Наук  
 СССР


30 MAY 2011



5 FEB 2013

6370

Դեռ դրանից շպտ առաջ՝  
Հրաչի հայրը քյոխվից  
պարտք եր արել քիչ հաճար,  
վոր չկոտորվեն սովից:  
Յեվ մեռել եր հայրը ծեր,  
Հրաչին ու մայրը իր՝  
իրենց ծանր պարտքի տեղ  
ծառայում եյին քյոխվին:  
Մեր փոքրիկ գառնարածը  
միտք եր անում ամեն որ,  
թե ի՞նչ ե իր կերածը—  
չոր, դարի հաց մի կտոր:  
Գյուղում ապրելը դժար,  
քյոխվեն զալում, քյոխվեն տեր,  
Յեվ մեր բատրակ Հրաչը  
գյուղից փախավ մի գիշեր:  
Հասավ քաղաք եղ գիշեր,  
կայարանում ել մնաց,  
ախար ճամբա չգիտեր,  
վոր ելի հեռու գնար:  
Յեվ ինքն իրեն մտածեց,  
վոր յեթե այստեղ մնամ,  
կամաց կամաց սովորեմ  
մեքենավար կղառնամ:  
Հենց այդ կայարանում ել  
կար մի խելացի վարպետ,  
նա Հրաչին վերցրեց  
իրեն համար աշակերտ:  
Յեվ այդ վարպետի վրա  
պետք մի լավ բարկացավ,  
թե ինչո՞ւ առանց իրեն,  
նոր աշակերտ ե բերել:  
Բայց վարպետը Հրաչի  
հին բանվոր եր բոյլշեիկ,  
վողջ բանվորների միջին  
անուն ուներ ու պատիվ:  
Հրաչին յերեք տարի  
նա խարդախ մ պահեց,



59506-66



Հրաչիկը նրանից  
շատ լավ բաներ սովորեց :  
Կայարանում մի փոքրիկ  
բոյլչեկիկան խմբակ կար .  
Դաղտնի ժողով եր անում  
նա բանվորների համար :

3

Բոյլչեկիկան խմբակն այդ  
քսան թվի Մայիսին ,  
կայարանը վերցրեց ,  
զործագուլ հայտարարեց :  
Հրաչն արդեն կոմյերիս ,  
այդ բոյլչեկիկների հետ ,  
ապստամբության համար  
դաշնակների գեմ կովեց :  
Կառաղեց գաշնակ բանդան ,  
մեր մարտիկներին բռնեց ,  
Հրաչին ել տարան բանա—  
ապստամբությունը ճնշվեց . . .

4.

Դորձյալ Հրաչնց գյուղում  
քյոխան եր տեր և իշխան .  
Տարչին սրա թիկունքում ,  
խակ տերտերը — ուղնական . . .  
Խլում հացը գյուղացու ,  
ուտում ելին թալանում .  
յեվ ո՞ւմ մտքով եր անցնում ,  
վոր Մանթաշի լեռներում  
կա մի հաւուստ քարահանք ,  
կարմիր , կարմիր վարդի պես ,  
չենքի համար պետքական  
վողջ յերկիրը կանի չեն :  
Եե՛ , թալանչի գաշնակին  
եղքան չնորշք վորտեղից ,  
տուֆք պատրաստ ցորեն չեր ,  
վոր թալաներ նա գյուղից :  
Եսպես յերկար տարիներ  
Արագածի լանջերում






տուֆաքարը քնած եր  
անմշակ ու անոգուտ:

5.

Քսան թվի աշունը,  
ո՞վ չգիտի այս մասին,  
յերբ վոր Կարո Սասունը  
մի չնչոփ փախավ Թավքիդ:  
Այդ տարի նոյեմբերին  
կարմիր բանակը հերոս,  
բանվորները բոյլչեփիկ,  
մեր ավերակ յերկրում:  
Դաշնակին տապալեցին,  
դուրս արեցին մեր յերկրից  
բանվորական պետություն  
ու խորհուրդներ հիմնեցին:  
Յեվ մութ բանտից դուրս յեկավ  
մեր բոյլչեփիկ Հրաչը,  
դարձավ նու մեքենավար  
խորհրդային գնացքի:  
Յեվ սկսեց չենանալ  
մեր յերկիրը ավերակ,  
աշխատանքով չինարար  
ծաղկեցին զյուղ ու քաղաք:  
Մարդիկ յեկան քաղաքից,  
բանվորներ ու ինժեներ,  
վողջ սարերը չափեցին  
բաց արին անթիվ հորեր:  
Յեվ ծաղկաղարդ Մանթաշի  
ձորը լցվեց մարդկանցով,  
Հաղար քլունդ ու մաշին  
յերգեցին դղրդոցով:  
Յեվ բաց արին մարդիկն այ  
կարմիր տուֆի քարահանց  
վոր չենացող մեր յերկրին  
քար հասցնեն շատ ու լավ:  
Բանվորների մի բանակ  
առած բահ ու դինամիտ



շինեց մի լավ ճանապարհ—  
 քաղաքից դեպի Սրբիկ:  
 Յերկաթաշեն ճանապարհ,  
 ո՞վ եր տեսել իր որում,  
 դաշնակների ժամանակ  
 ինչո՞ւ պիտի նա գար գյուղ:  
 Մեր բանվորն ու գյուղացին  
 Սոցիալիզմ են կառուցում,  
 հարկավոր ե այդ գործին  
 յերկաթուղի, կարմիր տուփ:  
 Վորպեսզի մեր միության,  
 վողջ քաղաքներն ու գյուղեր,  
 յերկաթուղով միանան—  
 ճանապարհը լինի հետ:  
 Յեվ շուտ տանենք ամեն տեղ  
 կարմիր տուփը Սրբիկի—  
 շինենք գեղեցիկ տներ,  
 պալատներ աշխատանքի:  
 Ահա այս բանի համար  
 բոլենիկների Ցե Կան  
 յերկաթուղի ուղարկեց  
 Սրբիկ-տուփի քարահանք:  
 Յեվ գիտե՞ք այդ գնացքի  
 մեքենավարը ով ե—  
 մեր ծանոթ Հրաչիկը,  
 վորմեծացել ե արդեն:  
 Հրաչն ինքը ցանկացավ  
 յերկաթուղով գյուղ գնալ—  
 գյուղում հազար ցավ, դարձէ կար,  
 յերբ ինքը փախավ քաղաք:  
 Մեծացել եր բոյ քաշել  
 կանաչ բարդի ծառի պես  
 և ժամանակն եր արդեն  
 վոր գնացքով գնա յետ:  
 Իսկ այդ որը մեծ տոն եր  
 խորհրդային մեր յերկրում—  
 յերկրի Խորհրդայնացման  
 տարեդարձն ելինք տոնում:



Կարմիր տոնի այդ որը  
 գնացքը գնաց Արթիկ  
 Հրաչն և ղեկավարը  
 գյուղ գնացող գնացքի...  
 Գնացքն հասավ կայտան,  
 յեկան հանքափորները  
 ու ծիծաղեց նրանց հետ  
 ծանոթ մեքենավարը:  
 —Բարե Հրաչ այ՛ կեցես՝  
 մեռած եյինք քեզ կարծում,  
 ու բանվորները եսպես  
 վողջունում եյին, խոսում:  
 Մեր քաղաքից շտա հեռու,  
 Արագածի լանջերում  
 հիմա մուրճերն են յերգում  
 ու բանվորներն աշխատում:  
 Նրանք սիրուն ու թեթև  
 տուֆ են հանում քարհանքից  
 ու լույսերն ելեքտրիկ  
 ծիծաղում են վերեից:  
 Յեվ միշտ ուրախ իր յերգով  
 յերկաթուղին և գալիս—  
 մեքենավարը կարմիր,  
 վոր թեթև տուֆը տանի:  
 Ու վազում ե Հրաչի  
 գնացքը միլիոն վերստեր  
 կանգնում մեր մեծ յերկրի  
 քաղաքներում բազմաթիվ:  
 Հսկաները մեր յերկրի—  
 Դնեպրոստրոյ, ձորագես  
 պահանջում են այդ քարից,  
 ով այս մասին չդիմէ:  
 Յեվ տանում ե Հրաչը  
 Մանթաշի քարը կարմիր,  
 վոր մեր յերկրում որ տուչ  
 մեծ հնդամյակը հաղթի:

ՅԱՅԼԻ ՈՒՐ  
 ԻՆՍՏԻՏՈՒ  
 ՎՈՏՈԿՈՎԵԴԵՆԻ  
 Ակադեմիա Խան  
 ԽՍՀՄ



«Ազգային գրադարան  
 NL0396015

6578

919.р. 604.

LA  
505



БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ПОСТОЯННОГО  
АНКЕТИРОВАНИЯ  
СССР